ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 18.12.2020թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ՍՑ-ՆԳ-2020/252

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի, ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 03.12.2020թ. թիվ 26/26-1/17906-2020 գրությամբ «ԳՌԵԳԳՌԵՍՏՈՆ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. <u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը ՀՀ Նախագահի աշխատակազմի 26.11.2020թ. թիվ ԱՂ-1347-2020 գրության հիման վրա 03.12.2020թ. թիվ 26/26-1/17906-2020 գրությամբ նախաձեռնել է «ԳՌԵԳԳՌԵՍՏՈՆ» ՍՊԸ-ին (հետայսու նաև՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. <u>«ԳՌԵԳԳՌԵՍՏՈՆ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>

«ԳՌԵԳԳՌԵՍՏՈՆ» ՍՊԸ-ն Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի սույն որոշումը կայացնելու օրվա դրությամբ գրավոր դիրքորոշում չի ներկայացրել:

«ԳՌԵԳԳՌԵՍՏՈՆ» ՍՊԸ-ն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2020/252 ընթացակարգի շրջանակներում 14.12.2020թ. ժամը 10:25-ին և 18.12.2020թ. ժամը 09:50-ին հրավիրված նիստերի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

3. ՀՀ Նախագահի աշխատակազմի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.

ՀՀ Նախագահի աշխատակազմը (հետայսու նաև՝ Պատվիրատու) ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 26.11.2020թ. թիվ ԱՂ-1347-2020 գրությամբ հայտնել է, որ Հանրապետության նախագահի աշխատակազմը մասնակի միակողմանի լուծել է «ԳՌԵԳԳՌԵՍՏՈՆ» ՍՊԸ-ի հետ 19.08.2020թ.-ին կնքված ՀՆԱ-ԳՀԱՇՁԲ-20/74 ծածկագրով «Պետության կարիքների համար կապալային աշխատանքների կատարման պետական գնման» պայմանագիրը: Պայմանագիրը միակողմանի լուծելու պատճառ է հանդիսացել «ԳՌԵԳԳՌԵՍՏՈՆ» ՍՊԸ-ի կողմից պայմանագրով ստանձնած պարտավորություններ խախտելու հանգամանքը, մասնավորապես խախտվել է պայմանագրով նախատեսված աշխատանքի ժամկետը, այդ թվում սահմանված նոր ժամկետը, ինչպես նաև թերությունների վերացման ողջամիտ ժամկետը:

Ամփոփելով վերոգրյալը՝ Պատվիրատուն հայտնել է, որ ղեկավարվելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի թիվ 526 որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 45-րդ կետի դրույթներով՝ տրամադրում է «ԳՌԵԳԳՌԵՍՏՈՆ» ՍՊԸ-ի տվյալները՝ համապատասխան հիմքերով:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2020/252 ընթացակարգի շրջանակներում 14.12.2020թ. ժամը 10:25-ին և 18.12.2020թ. ժամը 09:50-ին հրավիրված նիստերի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. ՍՑ-ՆԳ-2020/252 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

ՍՑ-ՆԳ-2020/252 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. ՀՀ Նախագահի աշխատակազմի և «ԳՌԵԳԳՌԵՍՏՈՆ» ՍՊԸ-ի միջև 19.08.2020թ. կնքվել է թիվ ՀՆԱ-ԳՀԱՇՁԲ-20/74 ծածկագրով աշխատանքների կատարման պայմանագիր (հետայսու նաև՝ Պայմանագիր), որի 1-ին կետի 1.1 ենթակետի համաձայն՝ Կապալառուն՝ տվյալ դեպքում «ԳՌԵԳԳՌԵՍՏՈՆ» ՍՊԸ-ն, պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) N 1 Հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված շենքերի և շինությունների ընթացիկ նորոգման աշխատանքները (այսուհետ՝ աշխատանք), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված աշխատանքը և վարձատրել դրա համար:

2. Պայմանագրի 1.2 ենթակետի համաձայն՝ նախատեսված աշխատանքները կատարվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված ստանդարտներին, շինարարական նորմերին և կանոններին, աշխատանքի նախագծին, ինչպես նաև պայմանագրի անբաժանելի մասը կազմող աշխատանքի ծավալաթերթ-նախահաշվին համապատասխան:

3. Պայմանագրի 1.3 ենթակետի համաձայն՝ Պայմանագրով նախատեսված աշխատանքները սկսվում են պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո և կատարման ժամկետը սահմանվում է՝ 45 օրացուցային օրը:

Պայմանագրով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների կատարման ժամկետները որոշվում են կողմերի կողմից համաձայնեցված օրացուցային գրաֆիկով (Հավելված N 2):

4. Պայմանագրի 3.4-րդ կետի 3.4.1-րդ ենթակետի համաձայն՝ Կապալառուն պարտավոր է աշխատանքների 100 տոկոսը կատարել անձամբ, պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իր ուժերով, գործիքներով, մեխանիզմներով, ինչպես նաև անհրաժեշտ նյութերով ու պատշաճ որակով՝ նախագծին և ծավալաթերթին համապատասխան:

5. Պայմանագրի 5-րդ կետի 5.1-րդ ենթակետով սահմանվում է, որ Պայմանագրի ընդհանուր գինը կազմում է 4 033 000 (չորս միլիոն երեսուներեք հազար) ՀՀ դրամ: Գինը ներառում է Կապալառուի կողմից իրականացվող բոլոր ծախսերը:

6. Պայմանագրին կից Հավելված 1-ով՝ ծավալաթերթ-նախահաշվով, սահմանվել են շենքերի և շինությունների ընթացիկ նորոգման աշխատանքների կատարումը:

7. Պայմանագրին կից Հավելված 2-ի՝ շենքերի և շինությունների ընթացիկ նորոգման աշխատանքների կատարման օրացուցային գրաֆիկի համաձայն՝ Աշխատանքները պետք

սկսվեն Պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառվելու հաջորդ օրը և կատարման ժամկետը սահմանվում է՝ 45 օրացուցային օրը:

8. «ԳՈԵԳԳՈԵՍՏՈՆ» ՍՊԸ-ին ուղղված 24.11.2020թ. ծանուցմամբ ՀՀ Նախագահի աշխատակազմը, հայտնել է հետևյալը.

«Պայմանագրով աշխատանքների կատարման ժամկետ է սահմանվել 2020 թվականի հոկտեմբերի 5-ը: Այդ ժամկետի ավարտին պայմանագրով նախատեսված աշխատանքը Ձեր Ընկերության կողմից չի կատարվել: Ձեր Ընկերության կողմից խախտվել է պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը):

Հանրապետության Նախագահի աշխատակազմի ղեկավարի տեղակալը պայմանագրի 3.1.2 կետի համաձայն սահմանել է աշխատանքի կատարման նոր ժամկետ՝ 2020 թվականի հոկտեմբերի 20-ը, որի մասին Ձեզ տեղեկացվել է 10.10.2020թ.-ին Ընկերությանն ուղղված գրությամբ: Սահմանված նոր ժամկետում ևս Ընկերության կողմից պայմանագրով նախատեսված աշխատանքը ամբողջությամբ չի կատարվել:

20.11.2020թ. էլեկտրոնային փոստի միջոցով Ընկերությանը տրամադրվել է այն աշխատանքների անվանումները և ծավալները, որոնք չեն կատարվել կամ կատարվել են թերություններով և համարվում են չկատարված: Միաժամանակ Ձեզ առաջարկվել է մինչև 2020 թվականի նոյեմբերի 23-ը ներառյալ ավարտել աշխատանքները և վերացնել թերությունները: Սակայն ոչ մի քայլ չեք ձեռնարկել և ի պատասխան այդ գրությանը՝ կրկին ներկայացրել եք անհիմն պատճառաբանություններ և աշխատանքը կատարելու համար անընդունելի և ոչ իրավաչափ պայմաններ:

Պայմանագրով նախատեսված առանձին տեսակի այն աշխատանքները, որոնք Ձեր Ընկերության կողմից ամբողջությամբ կատարվել են, Հանրապետության նախագահի աշխատակազմի կողմից ընդունվել են և դրանց դիմաց վարվել է: Պայմանագրով նախատեսված որևէ այլ առանձին տեսակի աշխատանքներ Ընկերության կողմից ամբողջական չեն կատարվել և վերջնական արդյունք Հանրապետության Նախագահի աշխատակազմին չի հանձնվել:

Ելնելով վերագրյալից և հիմք ընդունելով պայմանագրի 3.1.4 կետի բ) և դ) ենթակետերը՝ Հանրապետության նախագահի աշխատակազմը 2020 թվականի նոյեմբերի 24-ին մասնակի՝ 2 311 125.9 ՀՀ դրամի մասով, միակողմանի լուծում է պայմանագիրը»:

9. Պատվիրատուի կողմից տեղեկագրում (www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքում) 24.11.2020թ հրապարակվել է Պայմանագիրը միակողմանի մասնակի լուծելու մասին ծանուցումը:

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 03.12.2020թ. թիվ 26/26-1/17906-2020 գրությունը, ՀՀ Նախագահի աշխատակազմի 26.11.2020թ. թիվ ԱՂ-1347-2020 գրությունը և կից փաստաթղթերը, ինչպես նաև գործում առկա փաստաթղթերը, հայտնում եմ հետևյալը.

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 345-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պարտավորության ուժով մի անձը (պարտապանը) պարտավոր է մեկ այլ անձի (պարտատիրոջ) օգտին կատարել որոշակի գործողություն. այն է՝ վճարել դրամ, հանձնել գույք, կատարել աշխատանք, մատուցել ծառայություն և այլն, կամ ձեռնպահ մնալ որոշակի գործողություն կատարելուց, իսկ պարտատերն իրավունք ունի պարտապանից պահանջել կատարելու իր պարտականությունը:

Նույն օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե ՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Այսպիսով՝ ՀՀ Նախագահի աշխատակազմի և «ԳՌԵԳԳՌԵՍՏՈՆ» ՍՊԸ-ի միջև 19.08.2020թ. կնքվել է թիվ ՀՆԱ-ԳՀԱՇՁԲ-20/74 ծածկագրով աշխատանքների կատարման պայմանագիր, որի 1-ին կետի 1.1 ենթակետի համաձայն՝ Կապալառուն՝ տվյալ դեպքում «ԳՌԵԳԳՌԵՍՏՈՆ» ՍՊԸ-ն, պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել սույն պայմանագրի N 1 Հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված շենքերի և շինությունների ընթացիկ նորոգման աշխատանքները, իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված աշխատանքը և վարձատրել դրա համար:

Պայմանագրի 1.2 ենթակետի համաձայն՝ նախատեսված աշխատանքները կատարվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված ստանդարտներին, շինարարական նորմերին և կանոններին, աշխատանքի նախագծին, ինչպես նաև պայմանագրի անբաժանելի մասը կազմող աշխատանքի ծավալաթերթ-նախահաշվին համապատասխան:

Պայմանագրի 1.3 ենթակետի համաձայն՝ Պայմանագրով նախատեսված աշխատանքները սկսվում են պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո և կատարման ժամկետը սահմանվում է՝ 45 օրացուցային օրը:

Պայմանագրով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների կատարման ժամկետները որոշվում են կողմերի կողմից համաձայնեցված օրացուցային գրաֆիկով (Հավելված N 2):

Պայմանագրի 3.4-րդ կետի 3.4.1-րդ ենթակետի համաձայն՝ Կապալառուն պարտավոր է աշխատանքների 100 տոկոսը կատարել անձամբ, պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իր ուժերով, գործիքներով, մեխանիզմներով, ինչպես նաև

անհրաժեշտ նյութերով ու պատշաճ որակով՝ նախագծին և ծավալաթերթին համապատասխան:

Պայմանագրի 5-րդ կետի 5.1-րդ ենթակետով սահմանվում է, որ Պայմանագրի ընդհանուր գինը կազմում է 4033000 (չորս միլիոն երեսուներեք հազար) ՀՀ դրամ: Գինը ներառում է Կապալառուի կողմից իրականացվող բոլոր ծախսերը:

Պայմանագրին կից Հավելված 1-ով՝ ծավալաթերթ-նախահաշվով, սահմանվել են շենքերի և շինությունների ընթացիկ նորոգման աշխատանքների կատարումը:

Պայմանագրին կից Հավելված 2-ի՝ շենքերի և շինությունների ընթացիկ նորոգման աշխատանքների կատարման օրացուցային գրաֆիկի համաձայն՝ Աշխատանքները պետք սկսվեն Պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառվելու հաջորդ օրը և կատարման ժամկետը սահմանվում է՝ 45 օրացուցային օր:

«ԳՌԵԳԳՌԵՍՏՈՆ» ՍՊԸ-ն Պատվիրատուին ուղղված 08.10.2020թ. գրությամբ հայտնել է հետևյալը՝

««ԳՌԵԳԳՌԵՍՏՈՆ» ՍՊԸ-ն ունի ՀՆԱ-ԳՀԱՇՁԲ-20/74 ծածկագրով 19.08.2020թ.-ին կնքված կապալային աշխատանքների կատարման պայմանագիր Հանրապետության նախագահի աշխատակազմի հետ: Սակայն ներկայումս Ընկերությունը չունի բավարար միջոցներ Պայմանագրով ստանձնած աշխատանքներն ավարտելու համար:

Հաշվի առնելով կատարված աշխատանքները, խնդրում եմ աջակցել «ԳՌԵԳԳՌԵՍՏՈՆ» ՍՊԸ-ին և տրամադրել 1.500.000 ՀՀ դրամ աշխատանքները ավարտելու համար»:

Պատվիրատուն Ընկերությանն ուղղված 10.10.2020թ. գրությամբ հայտնել է հետևյալը՝

«Հանրապետության նախագահի և Ձեր Ընկերության միջև կնքված Պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարման վերջնաժամկետ է սահմանվել սույն թվականի հոկտեմբերի 5-ը: Պայմանագրով նախատեսված աշխատանքը Ընկերության կողմից մինչ օրս չի կատարվել: Ձեր կողմից խախտվել է պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը):

Համաձայն պայմանագրի 3.1.2 կետի՝ Պատվիրատուն սահմանում է աշխատանքի կատարման նոր ժամկետ՝ 2020 թվականի հոկտեմբերի 20-ը:

Միաժամանակ հայտնում ենք, որ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվելու է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված աշխատանքի գնի 0.05 տոկոսի չափով, իսկ աշխատանքի կատարման համար սահմանված նոր ժամկետը

խախտելու դեպքում պայմանագրի 3.1.4 կետի բ) պարբերության հիմքով պայմանագիրը միակողմանի կլուծվի»:

«ԳՌԵԳԳՌԵՍՏՈՆ» ՍՊԸ-ն Պատվիրատուին ուղղված 09.11.2020թ. գրությամբ հայտնել է հետևյալը՝

««Ներկայումս Ընկերությունը չունի բավարար միջոցներ Պայմանագրով ստանձնած աշխատանքներն ավարտելու համար»:

Խնդրում եմ ընդունել փաստացի կատարված աշխատանքները և վճարել դրա դիմաց, որպեսզի Ընկիերությունը ունենա հնարավորություն ավարտել աշխատանքները ամբողջ ծավալով»:

Պատվիրատուն Ընկերությանն ուղղված 20.11.2020թ. գրությամբ հայտնել է հետևյալը՝

«Պայմանագրով նախատեսված աշխատանքները ամբողջությամբ չեն կատարվել: Մասնավորապես չեն կատարվել պայմանագրի ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված հետևյալ աշխատանքները.

- Ներքին պատերի ատերի քսահարթում, հղկում և ներկում բարձրորակ ծեփամածիկով և ներկով (լատեքս) մինչև 4մ բարձրության վրա, տախտակամածի կառուցումով /գույքի տեղափոխում, մնացած գույքի, դռների և պատուհանների ծածկում պոլիեթիլենային թաղանթով/-180 մ²:
- «Արմստրոնգ» տիպի կախովի առաստաղի իրականացում (տեղադրում) /գույնը պետք է համապատասխանի տվյալ սենյակի գույնին/- 20 մ²:
- Օդորակիչների դրսի բլոկի ապամոնտաժում և մոնտաժում, գազի հնարավոր պահպանումով կամ լիցքավորումով, խողովակների երկարացում մինչև 12 մ /ավտոաշտարակ չի պահանջվում/-1 հատ:
- Լեդ լուսատուների տեղադրում կեղծ առաստաղի վրա, չափսը՝ 60*60մմ, 36-40վտ հզորությամբ- 4 հատ:
- Տիտան կամ համարժեք տեսակի առնվազն 16Ա վարդակների ներքին մոնտաժում- 10 հատ:
- Մեկ տեղանոց անջատիչի ներքին մոնտաժում մինչև 10 մերր 1.5*2մմ էլեկտրասնուցման լարի երկարացմամբ - 1հատ:
- Երկշերտ մեկուսացմամբ 2*4 մմ հաստությամբ էլեկտրասնուցման լարի արտաքին մոնտաժում կորոբներով-70մ:
- Էլեկտրական օդաքարշի տեղադրում պատուհանի վրա: Օդաքարշը պետք է ապահովի 27 մ3 ծավալով սենյակի օդափոխությունը -1հատ:

- Փայտե դռների և պատուհանների մասնակի վերականգնում, մակերեսի հարթեցում և ներկապատում /աշխատանքները պետք է կատարվեն տեղում/, գույնը սպիտակ և միատոն՝ արտաքին կլիմայական պայմաններին դիմացկուն- 65մ^2:
- Փայտյա երկփեղկ ոսկրագույն դռան պատրաստում և տեղադրում /ներառյալ դուռը/, չափսը՝ 1.5մ*3.5մ ուղղահայաց և հորիզոնական փորագրումներով, փականով, դռան վրա պետք է սուսալապատել ընդհանուր ծավալով 2400սմ*3սմ հատված ուղղանկյուններով /դուռը պետք է համապատասխանի դահլիճի մյուս դռներին/ - 1հատ:
- Պատուհանի ապակե փաթեթի փոխարինում լամինատով – 1.5մ^2:
- Պատուհանի ապակե փատեթի թաղանթապատում սպիտակ անթափանց թաղանթով-3մ^2:
- Փայտյա երկփեղկ ոսկրագույն դռան պատրաստում և տեղադրում /ներառյալ դուռը/, չափսը՝ 1.4մ*2.4մ ուղղահայաց և հորիզոնական փորագրումներով, փականով - 1հատ:

Վերոգրյալով պայմանավորված հայտնում ենք, որ նշված աշխատանքները մինչև նոյեմբերի 23-ը ներառյալ չավարտելու և առկա թերությունները չվերացնելու դեպքում, պայմանագրի 3.1.4 կետի բ) և դ) պարբերությունների հիման վրա կլուծվի»:

Ի պատասխան վերոհիշյալ գրության՝ Ընկերությունը 23.11.2020թ. գրությամբ հայտնել է հետևյալը.

«Ի պատասխան Ձեր 20.11.2020թ. գրության, հայտնում ենք, որ թվարկված չկատարված աշխատանքներից՝

- Ներքին պատերի ատերի քսահարթում, հղկում և ներկում բարձրորակ ծեփամածիկով և ներկով (լատեքս) մինչև 4մ բարձրության վրա, տախտակամածի կառուցումով /գույքի տեղափոխում, մնացած գույքի, դռների և պատուհանների ծածկում պոլիեթիլենային թաղանթով/-180 մ^2-կատարվել է ամբողջությամբ,
- «Արմստրոնգ» տիպի կախովի առաստաղի իրականացում (տեղադրում) /գույնը պետք է համապատասխանի տվյալ սենյակի գույնին/- 20 մ^2- չի կատարվել, քանի որ պատվիրատուի կողմից չեղարկվել է աշխատանքի անհրաժեշտությունը,
- Օդորակիչների դրսի բլոկի ապամոնտաժում և մոնտաժում, գազի հնարավոր պահպանումով կամ լիցքավորումով, խողովակների երկարացում մինչև 12 մ /ավտոաշտարակ չի պահանջվում/-1 հատ չի կատարվել, քանի որ պատվիրատուի կողմից չեղարկվել է աշխատանքի անհրաժեշտությունը,

- Լեդ լուսատուների տեղադրում կեղծ առաստաղի վրա, չափսը՝ 60*60մմ, 36-40վտ հզորությամբ- 4 հատ- կատարվել է մասնակի: Չնայած այն փաստին, որ ծավալաթերթ-նախահաշվում նշված լուսատուները նախատեսված էին եղել Արմստրոնգ տիպի կախովի առաստաղի համար, իսկ փոխարինվող լուսատուների արժեքը կրկնակի անգամ գերազանցում է պայմանագրով սահմանված լուսատուների արժեքին, Ընկերության կողմից այդ լուսատուները ձեռք են բերվել ձեր ներկայացուցչի ներկայությամբ և հանձնվել պատվիրատուին,
- Տիտան կամ համարժեք տեսակի առնվազն 16Ա վարդակների ներքին մոնտաժում- 10 հատ-պայմանագրով սահմանված 15 հատ տիտան կամ համարժեք տեսակի առնվազն 16Ա վարդակներից տեղադրվել է 6 հատը, չի կատարվել 9 հատը,
- Մեկ տեղանոց անջատիչի ներքին մոնտաժում մինչև 10 մերր 1.5*2մմ էլեկտրասնուցման լարի երկարացմամբ - 1հատ-կատարվել է ամբողջությամբ,
- Երկշերտ մեկուսացմամբ 2*4 մմ հաստությամբ էլեկտրասնուցման լարի արտաքին մոնտաժում կորոբներով-70մ- չի կատարվել,
- Էլեկտրական օդաքարշի տեղադրում պատուհանի վրա: Օդաքարշը պետք է ապահովի 27 մ3 ծավալով սենյակի օդափոխությունը -1հատ չի կատարվել, քանի որ պատվիրատուի կողմից չեղարկվել է աշխատանքի անհրաժեշտությունը,
- Փայտե դռների և պատուհանների մասնակի վերականգնում, մակերեսի հարթեցում և ներկապատում /աշխատանքները պետք է կատարվեն տեղում/, գույնը սպիտակ և միատոն՝ արտաքին կլիմայական պայմաներին դիմացկուն- 65մ^2 կատարվել է ամբողջությամբ,
- Փայտյա երկփեղկ ոսկրագույն դռան պատրաստում և տեղադրում /ներառյալ դուռը/, չափսը՝ 1.5մ*3.5մ ուղղահայաց և հորիզոնական փորագրումներով, փականով, դռան վրա պետք է սուսալապատել ընդհանուր ծավալով 2400սմ*3սմ հատված ուղղանկյուններով /դուռը պետք է համապատասխանի դահլիճի մյուս դռներին/ - 1հատ չի կատարվել,
- Պատուհանի ապակե փաթեթի փոխարինում լամինատով – 1.5մ^2 չի կատարվել, քանի որ պատվիրատուի կողմից չեղարկվել է աշխատանքի անհրաժեշտությունը,
- Պատուհանի ապակե փատեթի թաղանթապատում սպիտակ անթափանց թաղանթով-3մ^2 չի կատարվել, քանի որ պատվիրատուի կողմից չեղարկվել է աշխատանքի անհրաժեշտությունը,

- Փայտյա երկփեղկ ոսկրագույն դռան պատրաստում և տեղադրում /ներառյալ դուռը/, չափսը՝ 1.4մ*2.4մ ուղղահայաց և հորիզոնական փորագրումներով, փականով - 1հատ-չի կատարվել:

Բացի դրանից Ընկերության կողմից պայմանագրով սահմանված պարտավորություններից դուրս իրականացվել են հետևյալ աշխատանքները՝

- Արտաքին պատերի գաջե սվաղի քանդում և պատերի գաջե սվաղի իրականացում
- Սյուների ամբողջովին վերականգնում (Համաձայն նախահաշվի նախատեսված էին իրականացնել արտաքին պատերի քսահարթում, հղկում և ներկում՝ բարձրորակ, արտաքին կլիմայական պայմանների դիմացկուն ծեփամածիկով և ներկով (լատեքս) մինչև 6մ բարձրության վրա, տախտակամածի կառուցումով /դռների և պատուհանների ծածկում պոլիեթիլենային թաղանթով /239 քառ.մ., սակայն քանի որ արտաքին պատերը և սյուները վնասված էին այդ աշխատանքը հնարավոր չէր կատարել առանց պատերի գաջե սվաղի քանդման և պատերի գաջե սվաղի իրականացման, ինչպես նաև սյուների վերականգման աշխատանքների).
- գիպսակարտոնե սակառի տեղադրում օդորոկիչների քողարկման համար.
- փայտյա շրիշակների տեղադրում

Հաշվի առնելով թվարկվածը խնդրում եմ ընդունել կատարված աշխատանքները ամբողջ ծավալով, ինչից հետո Ընկերությունը կշարունակի աշխատանքները»:

«ԳՌԵԳԳՌԵՍՏՈՆ» ՍՊԸ-ին ուղղված 24.11.2020թ. ծանուցմամբ ՀՀ Նախագահի աշխատակազմը հայտնել է հետևյալը.

«Պայմանագրով աշխատանքների կատարման ժամկետ է սահմանվել 2020 թվականի հոկտեմբերի 5-ը: Այդ ժամկետի ավարտին պայմանագրով նախատեսված աշխատանքը Ձեր Ընկերության կողմից չի կատարվել: Ձեր Ընկերության կողմից խախտվել է պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը):

Հանրապետության Նախագահի աշխատակազմի ղեկավարի տեղակալը պայմանագրի 3.1.2 կետի համաձայն սահմանել է աշխատանքի կատարման նոր ժամկետ՝ 2020 թվականի հոկտեմբերի 20-ը, որի մասին Ձեզ տեղեկացվել է 10.10.2020թ.-ին Ընկերությանն ուղղված գրությամբ: Սահմանված նոր ժամկետում ևս Ընկերության կողմից պայմանագրով նախատեսված աշխատանքը ամբողջությամբ չի կատարվել:

20.11.2020թ. էլեկտրոնային փոստի միջոցով Ընկերությանը տրամադրվել է այն աշխատանքների անվանումները և ծավալները, որոնք չեն կատարվել կամ կատարվել են թերություններով և համարվում են չկատարված: Միաժամանակ Ձեզ առաջարկվել է մինչև

2020 թվականի նոյեմբերի 23-ը ներառյալ ավարտել աշխատանքները և վերացնել թերությունները: Սակայն ոչ մի քայլ չեք ձեռնարկել և ի պատասխան այդ գրությանը՝ կրկին ներկայացրել եք անհիմն պատճառաբանություններ և աշխատանքը կատարելու համար անընդունելի և ոչ իրավաչափ պայմաններ:

Պայմանագրով նախատեսված առանձին տեսակի այն աշխատանքները, որոնք Ձեր Ընկերության կողմից ամբողջությամբ կատարվել են, Հանրապետության նախագահի աշխատակազմի կողմից ընդունվել են և դրանց դիմաց վարվել է: Պայմանագրով նախատեսված որևէ այլ առանձին տեսակի աշխատանքներ Ընկերության կողմից ամբողջական չեն կատարվել և վերջնական արդյունք Հանրապետության Նախագահի աշխատակազմին չի հանձնվել:

Ելնելով վերագրյալից և հիմք ընդունելով պայմանագրի 3.1.4 կետի բ) և դ) ենթակետերը՝ Հանրապետության նախագահի աշխատակազմը 2020 թվականի նոյեմբերի 24-ին մասնակի՝ 2 311 125.9 ՀՀ դրամի մասով, միակողմանի լուծում է պայմանագիրը»:

Պատվիրատուի կողմից տեղեկագրում 24.11.2020թ հրապարակվել է Պայմանագիրը միակողմանի մասնակի լուծելու մասին ծանուցումը:

Այսպիսով՝ ամփոփելով գործով առկա վերոգրյալ փաստերը, համադրելով կիրառման ենթակա նորմերի հետ՝ արձանագրում եմ հետևյալը՝

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետը սահմանում է, որ ***<u>մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը:</u>***

Պայմանագրի 2-րդ կետի 2.1.4-րդ ենթակետի համաձայն՝ Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե.

ա) Կապալառուն ժամանակին չի սկսում աշխատանքի կատարումը կամ աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար,

բ) ***<u>Կապալառուն խախտել է պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը),</u>***

գ) Կապալառուի կողմից կատարված աշխատանքը չի համապատասխանում նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջներին,

դ) ***<u>Կապալառուի կողմից խախտվել են պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով աշխատանքի թերությունների անհապույց վերացման ողջամիտ ժամկետները.</u>***

Պայմանագրի 1.3 ենթակետի համաձայն՝ Պայմանագրով նախատեսված աշխատանքները սկսվում են պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո և կատարման ժամկետը սահմանվում է՝ 45 օրացուցային օրը:

Կողմերի միջև Պայմանագիրը կնքվել է 19.08.2020թ.:

Պայմանագրի 5-րդ կետի 5.1-րդ ենթակետով սահմանվում է, որ Պայմանագրի ընդհանուր գինը կազմում է ***<u>4 033 000 ՀՀ դրամ</u>***:

Այսպիսով՝ «ԳՌԵԳՈՌԵՍՏՈՆ» ՍՊԸ-ն իր և ՀՀ Նախագահի աշխատակազմի միջև 19.08.2020թ. կնքված Պայմանագրով ստանձնել է Պայմանագրի N 1 Հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված շենքերի և շինությունների ընթացիկ նորոգման աշխատանքները Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո 45 օրացուցային օրում ՀՀ Նախագահի աշխատակազմին մատուցելու պարտականությունը: Արձանագրում եմ, որ գործում առկա աշխատանքների կատարման 16.10.2020թ. N 2989056618 և 13.11.2020թ. N 0607769386 հարկային հաշիվների համաձայն՝ Պայմանագրի շրջանակներում Ընկերության կողմից 4 033 000 ՀՀ դրամ իրականացվելիք աշխատանքներից կատարվել են 1 721 874.1 ՀՀ դրամի աշխատանքներ:

Այսպիսով՝ գործով առկա նյութերի համաձայն՝ Ընկերությունը Պայմանագիրը լուծելու օրվա դրությամբ՝ 24.11.2020թ., չի կատարել Պայմանագրով նախատեսված 2 311 125.9 ՀՀ դրամի աշխատանքներ՝ խախտելով աշխատանքի կատարման ժամկետը, որի հետևանքով Ընկերությունը թույլ է տվել Պայմանագրի էական խախտում, որն էլ իր հերթին հանգեցրել է Պատվիրատուի կողմից Պայմանագրի միակողմանի մասնակի լուծման:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ գտնում եմ, որ Ընկերությունը թույլ է տվել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի խախտում, ուստի առկա են Ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքերը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 03.12.2020թ. թիվ 26/26-1/17906-2020 գրությամբ «ԳՌԵԳԳՌԵՍՏՈՆ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը բավարարել և «ԳՌԵԳԳՌԵՍՏՈՆ» ՍՊԸ-ին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված երկու տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**